

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐԻ  
2014ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Արմավիրի մարզի Արևաշատ համայնքի ղեկավարը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրանից բխող այլ իրավական ակտերի պահանջներով, 2014թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է որոշակի աշխատանքներ՝ ստորև ներկայացվող հետևյալ բնագավառներում.

**1. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների  
բնագավառ:**

- Համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով հանդես ենք եկել տարբեր միջնորդություններով մարզպետարանում, Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում, նոտարական գրասենյակում, քաղաքացիական ակտերի կացության ակտերի գրանցման բաժնում, սոցիալական ծառայության բաժնում, ոստիկանության բաժանմունքներում, զինվորական կոմիսարիատում և այլ կազմակերպություններում:

- Կատարվել է համայնքի բնակիչ հանդիսացող 80 քաղաքացիների ընդունելություն, քննարկվել է տարբեր բնույթի հարցեր, առաջարկություններ, որոնց մեծ մասին տրվել է դրական լուծում

. 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բնակիչներից ստացվել է 30 դիմում, որոնց ժամանակին տրվել է պատասխան:

. ստացվել է 112 գրություն

. ուղարկվել է մարզպետարան, անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանում և այլ կազմակերպություններին 100 գրություն

. կայացվել է համայնքի ղեկավարի 36 որոշում, ավագանու 4 նիստ

. արձակվել է 8 կարգադրություն

. բնակչությանը տրամադրվել է տարբեր բնույթի 282 տեղեկանքներ

. աշխատակազմի միջոցով կատարվել է համայնքի բնակչության ամենամյա սեռատարիքային հաշվառման աշխատանքներ

. կազմակերպվել է համայնքի գրքերի, գործավարության մատյանների, արխիվային գործի, տարբեր բնույթի հաշվետվությունների, տեղեկատվությունների, հաշվապահական հաշվառման և այլ պատասխանների կազմման և վարման գործընթացը

. աշխատակազմի միջոցով օժանդակվել և անհրաժեշտ փաստաթղթեր է տրամադրվել համայնքի բնակիչներին տարբեր ֆինանսական կազմակերպություններից և բանկերից գյուղատնտեսական, բնակարանային, շինարարության և այլ վարկեր ստանալու նպատակով

**2. Ֆինանսների բնագավառ**

Համայնքի ավագանու նիստի հաստատմանն է ներկայացվել 2013 թվականի Արևաշատի համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Մեծ ուշադրություն է դարձվել համայնքի բյուջեով նախատեսված բյուջեի եկամուտների հավաքագրմանը, տնօրինել բյուջեի ֆինանսական միջոցները, ապահովվել դրանց նպատակային օգտագործումը, ստորագրվել բոլոր ֆինանսական փաստաթղթերը:

Բյուջեի եկամուտների գծով 6 ամսվա կատարողականը կազմում է 97,9 %, որից

հողի հարկ 105,7 %

գույքահարկ 67,8 %

տեղական տուրքեր 114,6 %

### **3.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

. Տրվել է 1 ճարտարապետահատակագծային առաջադրանք.

. քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ:

*Դասարկվել է 5-*  
. դաշտամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ, կատարվել է նաև կուտակված շինարարական և կենցաղային աղբի մաքրում և տեղափոխում. աղբավայր

. իրականացվում է կանոնավոր աղբահանություն համայնքի բնակելի ամբողջ տարածքում, շաբաթը 1 օր: Աշխատավարձը տրամադրվում է համայնքի բյուջեից:

### **4.Պաշտպանության և հասարակական կարգի պահպանության բնագավառ**

. Աջակցություն է ցուցաբերվել զարմանային զորակոչին, զինկոմիսարիատի ստացված ծանուցագրերը հանձնվել են զորակոչիկներին, իսկ բացակաների համար տրվել են համապատասխան տեղեկանքներ՝ նրանց մոտավոր գտնվելու վայրի վերաբերյալ

. 10 պատանիներ զորակոչվել են ՀՀ բանակ:

. ՀՀ Բանակից զորացրվել են ծառայողներ և սահմանված ժամկետում հաշվառվել զինվորական կոմիսարիատում

Մեծ շուքով ենք նշել կանանց միջազգային օրվան նվիրված ցերեկույթը:

. Մայիսի 9-ին համայնքի կենտրոնում գտնվող գոհվածների հուշարձան կոթողի մոտ կազմակերպվել է հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվան նվիրված միջոցառում, հատկացվել է դրամական օգնություն Տոլյա Ավետիսյանին, Վոլոդյա Հարությունյանին և Խաչիկ Սահակյանին:

. Մայիսի 28-ին մասնակցել ենք Սարդարապատում կատարվող միջոցառմանը:

. Մշտական օժանդակություն է ցուցաբերվել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության Էջմիածնի բաժնի աշխատակիցներին, հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու և կանխելու նպատակով:

. Ոստիկանության աշխատակիցներին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել համայնքում ժամանակավոր բնակվող անձանց մասին:

## 5. Հողօգտագործման և գյուղատնտեսության բնագավառ

- Կատարվում է համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ, համագործակցելով մարզպետարանի հող վարչության և կադաստրի տարածքային ստորաբաժանման հետ
- Մատուցվել է մասնագիտական խորհրդատվական-ծառայություն համայնքի հողօգտագործողներին, բույսերի ճիշտ մշակման եփվանդությունների դեմ պայքարի, ոռոգման ժամկետների ու եղանակների, ստացված գյուղ մթերքների վաճառքի ու մթերման գործընթացում
- Հունվար ամսին կատարվել է համայնքի տարածքում գտնվող անասունների հաշվառում և ներկայացվել վիճակագրական ծառայություն, նախատեսված ժամկետներում կատարվել է իմունո կանխարգելիչ միջոցառումներ
- Իրականացվել է համայնքի գյուղատնտեսական մշակաբույսերի, ցանքատարածությունների բազմամյա տնկարկների տարածքների հաշվառում և տվյալների ներկայացում վիճակագրական ծառայություն:
- Համայնքին հատկացվել է ազոտական պարարտանյութ, որը բաժանվել է բնակչությանը:

## 6. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

- Համայնքում գործում է մեկ բուժ. ամբուլատորիա, որը սպասարկում է համայնքի բնակիչներին
- Բուժ ամբուլատորիան ապահովված է նոր սարքավորումներով
- 2014թվականի առաջին կիսամյակի ընթացքում բուժ.ամբուլատորիայի ընդունելությունը կազմել է 2758 այց, որից՝ 1934-ը 18 և բարձր տարիքի, 824-ը մինչև 18 տարեկան երեխաներ
- Կանխարգելիչ նպատակով այցերը կազմել են 1124
- Կանխարգելիչ պատվաստումները կազմել են 864
- Գրանցվել է 1127 տնային կանչ, ներառյալ նորածինների այցերը
- Կատարվել են լաբորատոր - գործիքային հետազոտություններ

## 7. Կրթության և մշակույթի բնագավառ

- Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց: Աշակերտների թվաքանակը՝ :  
Կազմակերպչական հարցերով աջակցություն է ցուցաբերվում միջն. դպրոցի բնականոն գործունեությանը: Գյուղապետարանի աշխատակազմի միջոցով ծնողների հետ տարվող բացատրական աշխատանքների արդյունքում դպրոցից խուսափող և պարտադիր ուսուցումից դուրս մնացող երեխաներ չկան:
- Կազմակերպվել է երգի, պարի, ասմունքի բազմաթիվ միջոցառումներ նվիրված մայրության, հաղթանակի, երեխաների պաշտպանության, ՀՀ անկախության օրվան: Գյուղապետարանը մասնակցել է դպրոցում կազմակերպված բոլոր միջոցառումներին և ցուցաբերել է կազմակերպչական օգնություն:

## 8. Սոցիալական հարցերի բնագավառ

Համայնքի բնակիչներից ստացվել են դիմումներ, սոց. օգնություն տրամադրելու մասին և 9 ընտանիքների հատկացվել է դրամական օգնություն: Դրամական օգնություն է հատկացվել նաև համայնքի ծնունդ և մահ ունեցող 11 ընտանիքներին:

## 9. Առևտրի սպասարկման բնագավառ

Սահմանված կարգով յուրաքանչյուր եռամսյակ վերահսկողություն է իրականացվել համայնքի տարածքում գործող խանութներում՝ ժամկետանց ապրանքների վաճառքը կանխելու ուղղությամբ

Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի 4 բույլավորություն

**Համայնքն ունի չլուծված շատ խնդիրներ, որոնք գյուղապետարանի միջոցով հնարավոր չէ լուծել, նրանցից ամենակարևորներն են՝**

1. Ռոտզման ներտնտեսային ցանցի կառուցում:
2. Մանկապարտեզի շենքի կառուցում:
3. Մշակույթի շենքի հիմնանորոգում:
4. Խմելու ջրագծի ներտնտեսային նոր ցանցի կառուցումը և կանոնավոր ու ամենօրյա ջրի մատակարարում:

Այսօր Արևաշատ գյուղն ու գյուղացին շատ հոգսեր ու խնդիրներ ունի, որոնցից ամենակարևորը համայնքում մանկապարտեզ ունենալ և ռոտզման ներտնտեսային ցանցի կառուցումն է: Համայնքում մանկապարտեզ ունենալը դարձել է երազանք: Իսկ ներտնտեսային ցանցի կառուցումով կվերանա ջրի կորուստը և կիջնի ջրի ինքնարժեքը:

2014 թվականի համար բազմաթիվ աշխատանքներ ենք նախատեսել, որոնք կավարտենք մինչև տարեվերջ:

ԱՐԵՎԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



/Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ/